




Australian Government


COVID-19
VACCINATION

Ի՞նչ է COVID-19-ի դեմ պատվաստանյութը: Արդյո՞ք այն անվտանգ է:

17 հուլիսի, 2022



Կորոնավիրուսային հիվանդությունը
(COVID-19) առաջանում է վիրուսից, որով
վարակվել են աշխարհի շատ մարդկիկ:
Վիրուսը կարող է տարածվել մեկ անձից
մյուսը և կարող է առաջացնել
հիվանդություն կամ ախտ:



COVID-19-ը կարող է տարածվել՝

- հեշտորեն
- արագորեն:



Պատվաստանյութը դեղամիջոց է, որը՝

- օգնում է մարդկանց պայքարել վիրուսի դեմ, եթե նրանք վարակվում են
- կարող է կանխել մարդկանց՝ վիրուսից ծանր հիվանդանալուց:



COVID-19-ի դեմ պատվաստանյութերը հակամարմիններ են արտադրում:

Հակամարմինները ձեր արյան այն մասն են, որը սովորեցնում է ձեր մարմնին պայքարել վիրուսների դեմ:



Պատվաստումն այն է, երբ
պատվաստանյութի ներարկում եք ստանում:
Դա արվում է ասեղով:



COVID-19-ի դեմ պատվաստումը
Ավստրալիայում բոլորի համար անվճար է,
նույնիսկ եթե դուք չունեք Medicare քարտ:



Դուք կարող եք որոշել պատվաստվել:



Որոշ մարդիկ կարող են պատվաստման կարիք ունենալ իրենց աշխատանքի պատճառով: Եթե վստահ չեք, կարող եք հարցնել ձեր գործատուին:

Արդյո՞ք COVID-19-ի դեմ պատվաստանյութը անվտանգ է



Աշխարհի գիտնականները պատրաստել են COVID-19-ի դեմ տարբեր պատվաստանյութեր:



Ավստրալիայում Բուժական ապրանքների վարչությունը (TGA) հաստատում է բոլոր պատվաստանյութերը՝ նախքան դրանց օգտագործումը:



TGA-ը անկախ բժշկական փորձագետների խումբ է:

Սա նշանակում է, որ նրանք ինքնուրույն որոշումներ են կայացնում՝ օգտագործելով իրենց ունեցած գիտական տեղեկատվությունը:



TGA-ը հաստատում է միայն այն պատվաստանյութերը, որոնք՝

- անվտանգ են
- լավ են աշխատում:



Պատվաստանյութը հաստատելուց հետո՝ TGA-ը՝

- պահում է իրենց կողմից հաստատված պատվաստանյութերի ցուցակը



- հետևում է, թե համայնքում ինչպես է աշխատում պատվաստանյութը:




Սա ներառում է՝

- ինչքան լավ է աշխատում պատվաստանյութը
- ինչքան անվտանգ է պատվաստանյութը:




TGA-ը հաստատել է COVID-19-ի դեմ 4 պատվաստանյութ Ավստրալիայում: Դրանք կոչվում են՝

- Pfizer պատվաստանյութ. կոչվում է նաև Comirnaty
- AstraZeneca պատվաստանյութ. կոչվում է նաև Vaxzevria



- Moderna պատվաստանյութ. կոչվում է նաև Spikevax
- Novavax պատվաստանյութ. կոչվում է նաև Nuvaxovid

Ինչ պետք է իմանալ պատվաստանյութերի մասին



Պատվաստանյութերը չեն պարունակում COVID-19:

Սա նշանակում է, որ պատվաստանյութերը չեն կարող ձեզ փոխանցել COVID-19:



Պատվաստումից հետո դուք կարող եք զգալ որոշ կողմնակի ազդեցություններ:

Կողմնակի ազդեցությունը մի բան է, որը երբեմն կարող է պատահել մարդկանց հետ դեղամիջոց ընդունելուց հետո:

COVID-19-ի դեմ պատվաստանյութերի կողմնակի ազդեցությունների մասին կարող եք տեղեկանալ այս փաստաթղթում՝

www.health.gov.au/resources/translated/covid-19-vaccination-after-your-vaccination-other-languages



Ձեր պատվաստումից հետո դեռ հնարավոր է, որ դուք վարակվեք COVID-19-ով այլ մարդկանցից:

Մա նշանակում է, որ յուրաքանչյուրը պետք է օգնի դանդաղեցնել COVID-19-ի տարածումը:



Դուք դեռ պետք է՝

- պահպանեք առնվազն 1.5 մետր հեռավորություն այլ մարդկանցից



- հաճախակի լվանաք ձեր ձեռքերը օձառով և ջրով



- օգտագործեք ձեռքի ախտահանիչ, երբ չեք կարող օգտագործել օձառ



- կարող եք դիմակ կրել, եթե չեք կարող պահպանել 1.5 մետր հեռավորություն մյուսներից



- մնացեք տանը, եթե վատ եք զգում



- թեստ հանձնեք, եթե ունեք COVID-19-ի որևէ ախտանիշ:



Ձեզ չեն կարող հետևել COVID-19-ի դեմ պատվաստում ստանալուց հետո: COVID-19-ի դեմ պատվաստանյութերը իրենց մեջ չունեն մանր տեխնոլոգիա, ինչպիսիք են՝

- ծրագրակազմ
- միկրոչիպեր:



COVID-19-ի դեմ պատվաստանյութը ձեզ անպտղաբեր չի դարձնի: Եթե դուք անպտղաբեր եք, դուք չեք կարող՝

- երեխա ունենալ
- հղիանալ:



COVID-19-ի դեմ պատվաստանյութերը չեն փոխի ձեր ԴՆԹ-ն (DNA):

Ձեր ԴՆԹ-ն ձեր մասին հատուկ տեղեկություններ են, որոնք առկա են ձեր օրգանիզմի յուրաքանչյուր բջիջում:



Եթե վստահ չեք, որ կարող եք
պատվաստանյութը ստանալ, նախ պետք է
խոսեք ձեր բժշկի հետ:

Հավելյալ տեղեկատվություն



Կարող եք այցելել Առողջապահության
նախարարության կայքը՝
www.health.gov.au/covid19-vaccines-languages
պատվաստանյութի մասին ձեր լեզվով
հավելյալ տեղեկատվության համար:



Կարող եք զանգահարել Ազգային
կորոնավիրուսի օգնության գիծ **1800 020 080**
հեռախոսահամարով: Ընտրեք տարբերակ **8**
անվճար թարգմանչական ծառայությունների
համար: